ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 43-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 39-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի,Ակունք համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու2017 թվականի նոյեմբերի 17-ի«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին» N39-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ.
1) որոշման հավելվածի 22-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.
«1.Համայնքի ավագանին, իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար,իր որոշմամբ ստեղծում է մշտական գործող՝3 իսկ անհրաժեշտություն առաջանալու դեպքում՝ ժամանակավոր հանձնաժողովներ:»,
2)որոշման հավելվածի 23-րդ կետի1-ին ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.
«1. Մշտական հանձնաժողովները լինում են՝
1) սոցիալական, առողջապահության,բնության պահպանության,գիտության, կրթության,մշակույթի և երիտասարդության հարցերի.
2) ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի
3) ենթակառուցվածքներին առնչվող հարցերի»:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ԱՎԱԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳՈՌ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**